ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՄՈՅԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ XIX Դ. 30-ԱԿԱՆ Թ. – XX Դ. ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մելքոնյան Աշոտ Աղասու

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ստեփանյանց Ստեփան Միհրանի

պատմական գիտությունների թեկնածու Վարդանյան Թամարա Ռազմիկի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հոկտեմբերի 5-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. օգոստոսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ առաքելական եկեղեցու սինոդային շրջանի[1] վարչական կառավարման պատմությունը գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես այն առումով, որ եկեղեցին հանդես էր գալիս որպես եկեղեցա-պետական կառույց՝ միաժամանակ իրականացնելով թե՛ հոգևոր և թե՛ աշխարհական կառավարման մարմիններին բնորոշ գործառույթներ:

Դեռևս Պյոտր Մեծից (1682–1725) սկսած Ռուսական կայսրությունում եկեղեցին դիտարկվում էր նախ և առաջ որպես պետական հաստատություններից մեկը: 1828 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո նույն մոտեցումը կիրառվեց նաև Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Սինոդային կառավարման համակարգի ներդրման միջոցով ռուսական իշխանությունները փորձեցին համատեղել ներքին և արտաքին քաղաքական շահերը:

Մոտավորապես XII դ. 70-ական թվականներից գոյություն ունեցող Վիրահայոց թեմը Հայ առաքելական եկեղեցու խոշոր կառույցներից էր: Հարյուրամյակների ընթացքում վիրահայության ստեղծած վիթխարի հոգևոր-մշակութային ժառանգությունը հայտնվել է կորստյան վտանգի առջև: Թեմի պատմության տարբեր կողմերի ուսումնասիրությունը կարևոր է ինչպես հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման, այնպես և ներկա թեմական կյանքի կազմակերպման գործընթացի համար:

Ներկայացվող հետազոտությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն: Խորհրդային շրջանում եկեղեցամերժ քաղաքականության հետևանքով հասարակության լայն շրջանակներում առկա էր դավանաբանական-աշխարհայացքային հարցերում չկողմնորոշվելու իրողությունը: Անժխտելի է Հայ առաքելական եկեղեցու ազգապահպան և ազգահավաք գործառույթների դերը: Ներկա փուլում Հայ առաքելական եկեղեցու առջև ծառացած օրակարգային հարցերից է թեմական և ծխական կյանքի կազմակերպման ուղենիշների մշակումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է տարբեր թեմերի օրինակով հետազոտել նախկին փորձը, վերհանել առկա խնդիրները:

Ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները: Հետազոտության առարկան է Սինոդային կառավարման համակարգի ներդրման ու գործարկման պայմաններում Վրաստանի և Իմերեթի թեմի օրինակով Հայ առաքելական եկեղեցու թեմական կառավարման համակարգի ուսումնասիրությունը:

Ատենախոսության հիմնական նպատակը XIX դարի 30-ական թվականների – XX դարի առաջին տասնամյակի Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցի ձևավորման ու կայացման գործընթացի համակողմանի հետազոտումն է, որի համար անհրաժեշտ է ուսումնասիրել խնդիրների հետևյալ փոխկապակցված խումբը՝

- ներկայացնել և վերլուծել թեմական վարչական կառույցը կազմող բոլոր օղակների կառուցվածքն ու գործառույթները,
- թեմական կենտրոնական վարչական մարմնի և միջին օղակների գործավարության առանձնահատկությունները, թեմական վարչությունում բյուրոկրատիայի դրսևորումները,
- վերհանել դրանցում առկա խնդիրները, ծագման պատճառներն ու հետևանքները,
- թեմական բարձրագույն իշխանության՝ Էջմիածնի սինոդի և կաթողիկոսի հետ ունեցած հարաբերությունների բնույթը,
- թեմական հոգևոր իշխանություններ - ծուխ փոխհարաբերությունները,
- Հայ առաքելական եկեղեցու շուրջ ծավալվող ներքին և արտաքին քաղաքական իրադարձությունների շրջանակներում ներկայացնել թեմական բարձրագույն հոգևոր իշխանությունների ձեռնարկած բարեփոխիչ քայլերը և դրանց արդյունքները:

Ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է XIX դ. 30-ական թվականներից մինչև XX դ. առաջին տասնամյակը: Հետազոտության ընթացքում «Պոլոժենիե»-ի ընդունման գործընթացի լուսաբանմանը անդրադարձ չի եղել, քանի որ այդ ուղղությամբ արդեն իսկ առկա են մի շարք ուսումնասիրություններ: Հիմնականում քննության են առնվել կանոնադրության ընդունումից հետո Վրաստանի և Իմերեթի թեմում տեղ գտած իրադարձությունները. այն է՝ թեմական կառավարման մարմինների կազմակերպման գործընթացն ու դրա հետագա ընթացքը:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Առաջին անգամ ամբողջական տեսքով ներկայացվել է XIX դարի 30-ական թվականների – XX

[1] Ռուս ուղղափառ եկեղեցու դեպքում սինոդային կառավարման շրջանն ընդգրկում է 1721–1917 թթ.: Հայ առաքելական եկեղեցու պարագայում՝ 1836–1917 թթ.: Հիմք ենք ընդունել ոչ թե 1806 թ., երբ Դանիել Ա. Սուրմառեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ հիմք դրվեց կաթողիկոսին կից գործող Բարձրագույն խորհրդարանի, այլ 1836 թ., երբ ընդունվեց «Պոլոժենիե»-ն և 1837 թ. բացվեց Էջմիածնի Լուսավորչական Սբ Սինոդը: Պաշտոնապես այն լուծարվեց միայն 1924 թ. հունվարի 1-ին Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի բացվելուց հետո (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 8, թ. 3), սակայն, Ռուսական կայսրության տապալմամբ պայմանավորված, սինոդային կառավարման շրջանի ավարտ ընդունված է համարել 1917 թ.:

դարի առաջին տասնամյակի Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառավարման պատմությունը՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք չհրապարակված արխիվային փաստաթղթեր: Մասնավորապես՝

• ուսումնասիրվել է թեմական վարչական կառույցը կազմող մարմինների աշխատանքային մեխանիզմը,

• թեմական կառավարման կենտրոնական և տեղական վարչական մարմինների գործունեության քննման օրինակով վեր է հանվել ժամանակի բյուրոկրատիայի դրսևորումները հոգևոր վարչությունում,

• թեմական կառավարման հիմքը կազմող օրենսդրական բազայի և դրա գործնական կիրառման արդյունքների քննման միջոցով ներկայացվել է թեմական վարչական կյանքի խնդիրները, ինչպես նաև հոգևոր վարչությունում ընտրությունների անցկացման, ընտրական իրավունքի կիրառման և ժողովրդի՝ եկեղեցու կառավարմանն ունեցած մասնակցության ձևը:

Թեմի վարչական կառույցի հետազոտումը կարող է նպաստ բերել ժամանակակից թեմական և ծխական կյանքի կազմակերպման խնդիրների լուծմանը, ինչպես նաև օգտակար լինել XIX–XX դարերում եկեղեցու ունեցած հասարակական դերի պատմության ուսումնասիրությամբ հետաքրքրվողների համար: Սինոդային շրջանի թեմական վարչական կյանքի ուսումնասիրությունը նպաստ է բերում նաև ռուսական կայսրության կողմից Հայ առաքելական եկեղեցին միևնույն ժամանակ վերահսկելի պահելու և արտաքին քաղաքական նպատակներով օգտագործելու քաղաքականության մեխանիզմների հետազոտմանը:

Գիտական ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը: Հայ առաքելական եկեղեցու սինոդային շրջանի թեմական կառավարման պատմությունը հիմնարար ուսումնասիրման չի ենթարկվել: Հետազոտողներն իրենց ուշադրությունը հիմնականում սևեռել են «Պոլոժենիե»-ի, դրա ընդունմանը նախորդող և հաջորդող իրադարձությունների, կաթողիկոսների գործունեության, Հայ առաքելական եկեղեցուն վերաբերող առանձին հիմնահարցերի պատմության ուսումնասիրությանը: Որպես կանոն, թեմերի կառավարման մեխանիզմը, վարչական կառույցի գործունեությունը, դրա առանձնահատկություններն ու խնդիրները դուրս են մնացել այդ շարքից: Թեմական կառավարման վերաբերյալ անդրադարձը կրել է ընդհանուր բնույթ: Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառավարման պատմությունը ևս համակողմանի գիտական ուսումնասիրության չի ենթարկվել:

Ընդհանուր առմամբ առկա ուսումնասիրություններն էլ կատարվել են հիմնականում նախախորհրդային և անկախության տարիներին: Խորհրդային

ժամանակներում՝ եկեղեցամերժ քաղաքականության պայմաններում, եկեղեցու պատմության ուսումնասիրման ուղղությամբ հետաքրքրությունը նվազեցվեց:

XIX դարի հեղինակներից Ա. Երիցյանն առաջիններից էր, որ օգտագործելով հարուստ փաստական նյութ՝ հրովարտակներ, կոնդակներ, պետական պաշտոնական գրություններ և մասնավոր նամակներ, երկու հատորով ներկայացրեց 1800–1842 թթ. Հայ առաքելական եկեղեցու շուրջ տեղի ունեցող իրադարձությունները: Ներկայացվող հետազոտության համար հետաքրքրություն է ներկայացնում աշխատության Բ. մասը[2], որտեղ արտացոլված են Հովհաննես Ը. Կարբեցու կաթողիկոսության շրջանը (1831–1842), «Պոլոժենիե»-ի ընդունման, եկեղեցական վարչական մարմինների ստեղծման և թեմերի բաժանման գործընթացի վերաբերյալ նյութերը:

Ա. Երիցյանի աշխատությունից քիչ ավելի վաղ Գյուտ ավագ քին. Աղանյանցի կողմից սկսվեց նաև «Դիւան հայոց պատմութեան» մատենաշարի հրատարակությունը, որի Բ. մասը[3] կարևոր տպագիր սկզբնաղբյուր է նախքան «Պոլոժենիե»-ի ընդունումը՝ սինոդային կառավարմանն անցնելը, կաթողիկոսին կից Բարձրագույն խորհրդարանի հիմնման պատմության մասին: Հետաքրքրություն են ներկայացնում նաև քահանայական խնդրի և եկեղեցու բարենորոգության վերաբերյալ նրա հետազոտությունները[4]:

Հայ առաքելական եկեղեցու վարչական կառույցի պատմության ուսումնասիրության և ընդհանրապես հայ եկեղեցական իրավունքի վերաբերյալ ամենահամապարփակ հետազոտությունը պատկանում է 1912–1948 թթ. Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ն. Մելիք-Թանգյանին: Նրա «Հայոց եկեղեցական իրաւունքը» աշխատության առաջին մասում ներկայացված են հայ եկեղեցական իրավունքի աղբյուրները, երկրորդում՝ եկեղեցական կազմակերպական կառույցը և ընդհանուր կառավարման հարցերը[5]:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև եկեղեցական վարչության այս կամ այն խնդիրն արտացոլող ուսումնասիրությունները: Ծխական կառավարման հարցերին անդրադարձած հեղինակներից են իշխան Կ.

---

[2] **Երիցեան Ա.**, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, հ. Բ, Թիֆլիզ, 1895:

[3] Դիւան հայոց պատմութեան (խմբ. Գիւտ աւագ քին. Աղանեան), հ. Ա–Բ, Թիֆլիս, 1893:

[4] **Գիւտ Աղանեան**, Քահանաների նիւթական ապահովութեան խնդիրը, Լումա, Գիրք Ա, 1896, էջ 247–262; Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրը եւ Ազգային եկեղեցական ժողովը, Փարիզ, 1926:

[5] **Մելիք-Թանգեան Ն.**, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. II, Շուշի, 1905: Տե՛ս նաև Ա. Բոզոյանի խմբագրությամբ վերահրատարակված տարբերակը՝ **Մելիք-Թանգյան Ն.**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2011:

Բեհբությանցը[6] և բժիշկ Սիմեոն Շահ-Նազարյանցը[7]: Առաջինիս ուսումնասիրությունը «Արձագանք» թերթի տարբեր համարներում լույս տեսած հոդվածների հավաքածու է փոքրիկ գրքույկի տեսքով, որտեղ հեղինակը, հենվելով ծխական հոգաբարձությունների կազմման վերաբերյալ կանոնադրության և օրենքների վրա, փորձել է ներկայացնել թե ինչ է ծուխը, ծխական հոգաբարձությունը, որն է նրանց իրավունքների և պարտականությունների շրջանակը: Ս. Շահնազարյանցը ևս, մեծ մասամբ հիմք ընդունելով Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ ռուսական պետական օրենքների համապատասխան հոդվածները, ներկայացրել է եկեղեցական վարչությունը, բարձրաձայնել նրանում առկա խնդիրները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով հաշվետվությունների անցկացման հարցին:

Եթե հաշվի չառնենք ժամանակի մամուլում քահանայական խնդրի վերաբերյալ լույս տեսած առանձին հոդվածները, ապա 1900 թ. Մոսկվայում հրատարակված Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդներից Արիստակես եպս. Սեդրակյանցի գրքույկը[8] կարելի է համարել առաջիններից մեկը: Հեղինակի աշխատանքն ամփոփ նկարագիրն է այն ամենի, ինչին նա անձամբ առնչվել էր իր գործունեության ընթացքում: Սույն հետազոտության համար հատկապես կարևոր է աշխատանքի այն մասը, որտեղ ներկայացված են Վրաստանի և Իմերեթի թեմի քահանայության խնդիրները: Նույն թվականին լույս տեսավ նաև Լ. Սարգսյանի «Հին ցաւ» հրապարակախոսական գրքույկը[9]: Հոգևոր դասի գործունեության վերաբերյալ քննադատական մոտեցում ցուցաբերելով հանդերձ՝ Լ. Սարգսյանը փորձել է վերհանել նաև հասարակական կյանքում նրանց ունեցած դերն ու նշանակությունը:

Քահանայական դասակարգի բարվոքման խնդրին նվիրված հաջորդ ուսումնասիրությունը[10] պատկանում է Մեսրոպ քին. Մելյանին[11], որը, քննադատական անդրադարձ կատարելով Արիստակես եպս. Սեդրակյանցի գործունեությանը, փորձել է ներկայացնել իր տեսակետները դրա առաջացման պատճառների ու լուծման հնարավոր ուղիների մասին:

[6] **Բեհբուդեանց Կ.,** Ծուխ: Ծխական հոգաբարձութեան կազմակերպութեան մասին, Թիֆլիս, 1893:

[7] **Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանց**, Հայոց եկեղեցու վարչութիւնը եւ ծուխը՝ ըստ ռուս. պետ. օրէնքի XI հատ. I մասի, Մոսկուա, 1911:

[8] **Արիստակես եպս. Սեդրակեանց**, Քահանայական խնդիր, Մոսկուա, 1900:

[9] **Սարգսեան Լ.,** Հին ցաւ, Մոսկուա, 1900:

[10] **Մեսրոպ քին. Մելեան,** Քահանայական խնդրի շուրջը, Թիֆլիս, 1901:

[11] Ծառայողական ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 561, թ. 21–24:

Հայ եկեղեցական բարենորոգչական շարժման ծավալման շրջանում հատկապես մեծ էր հետաքրքրությունը եկեղեցական, թեմական վերանորոգության հարցերի նկատմամբ: Առկա ուսումնասիրություններից կարող ենք առանձնացնել Երվանդ Տեր-Մինասյանի[12], Կարապետ Յաղուբյանի[13], Բաբկեն վարդապետի[14] աշխատանքները, որոնք որպես դեպքերի ժամանակակիցներ ներկայացրել են թե՛ տիրող իրավիճակը, թե՛ բարենորոգումների անցկացման հնարավոր տարբերակները: Եթե Երվանդ Տեր-Մինասյանի ուշադրության կենտրոնում Հայ առաքելական եկեղեցու բարեկարգման ընդհանուր հարցերն են, ապա հաջորդ երկու հեղինակները անդրադարձել են թեմական բարեկարգության, եկեղեցական կալվածքների կառավարման խնդիրներին:

Հետխորհրդային շրջանի հայ պատմաբանների ուշադրության կենտրոնում հայտնվեցին ինչպես Ամենայն հայոց կաթողիկոսների և նշանավոր հոգևորականների կյանքին ու գործունեությանն առնչվող հարցերը, այնպես և Հայ եկեղեցու տարբեր խնդիրներ: Սույն հետազոտության համար հատկապես առանձնանում են են Վ. Թունյանի[15], Հ. Հովհաննիսյանի[16] ուսումնասիրությունները, Ա. Մելքոնյանի խմբագրությամբ հրատարակված Կարապետ արքեպս. Բագրատունու կենսագրությունը[17]:

Ատենախոսության հիմնական աղբյուրագիտական հիմքը կազմում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվող Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի, Էջմիածնի Սբ Լուսավորչական Սինոդի, Կաթողիկոսական դիվանի, ինչպես նաև եկեղեցական այլ ֆոնդերի արխիվային վավերագրերը:

Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի ֆոնդը (№ 53) ՀԱԱ-ի խոշոր և արժեքավոր հավաքածուներից է, որի արխիվային փաստաթղթերի առաջին խումբը նախկին ՀԽՍՀ Պետական կենտրոնական արխիվին

[12] **Տեր-Մինասեանց Ե.,** Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը, Թիֆլիս, 1910:

[13] **Եաղուբեան Կ.,** Թեմական վերանորոգութիւն եւ Մատթէոս II կաթուղիկոս, Թիֆլիս, 1911:

[14] **Բաբգէն վարդապետ,** Ս. Էջմիածնի կալուածներն ու նրանց բարեկարգութեան ծրագիրը, Վաղարշապատ, 1908:

[15] **Тунян В. Г.,** Эчмиадзинский вопрос в политике России 1873–1903 гг., Ер., 2002, նույնի՝ Последний период патриаршества Хримяна 1904–1907 гг., Ер., 2003, Деятельность католикоса Макара 1885–1891, Ер., 2011, Католикос Всех Армян Нерсес V Аштаракеци, Ер., 2012:

[16] **Հովհաննիսյան Հ.,** Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901–1906 թթ., Եր., 2008:

[17] **Գեղամյանց Հ.,** Կարապետ արքեպիսկոպոս. կենսագրություն (առաջաբանը և ծանոթագր.՝ Ա. Մելքոնյանի), Եր., 1990:

է փոխանցել Վրացական պետական կենտրոնական արխիվը 1925 թ.: Լրացուցիչ նյութեր են փոխանցվել նաև 1962 թ.՝ ընդամենը 10406 պահպանման միավոր 1804–1923 ծայրային թվականներով:

Ֆոնդի արխիվային փաստաթղթերը տեսակավորված են 5 ցուցակներում, որոնցից չորսում ամփոփված են եկեղեցական չափաբերական մատյանները[18], իսկ վարչական բնույթի փաստաթղթերը՝ առաջին ցուցակում, որն ունի երկու մաս՝ 19 բաժիններով:

Հետազոտության համար կարևորություն են ներկայացնում հետևյալ բաժինների արխիվային գործերը՝

- Ընդհանուր-վարչական
- Հոգևոր պաշտոնյաների ծառայություն և բարքեր
- Երեսփոխանների[19] ընտրություն
- Կոնսիստորիայի նիստերի արձանագրություններ
- Տնտեսական
- Ռոճիկներ, նպաստներ, թոշակներ
- Վիճակագրական տեղեկություններ
- Դպրոցներ

Նշված բաժինների արխիվային վավերագրերը տեղեկություններ են հաղորդում թեմի կենտրոնական վարչական մարմնի կառուցվածքի և գործառույթների, նրանում առկա խնդիրների, փոխանորդությունների, գործակալությունների, հոգևորականների և ծխական համայնքների մասին: Հենքային նշանակության տեղեկություններ են հաղորդում նաև թեմական առաջնորդների հրամաններն ու զեկուցագրերը, հոգևոր ծառայողների՝ իրենց պաշտոնավարության վերաբերյալ կոնսիստորիային և թեմական առաջնորդին ներկայացրած հաշվետվություններն ու խնդրագրերը:

Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի արխիվային գործերի հաղորդած տեղեկությունների ամբողջացման գործում կարևոր նշանակություն ունի Էջմիածնի սինոդի ֆոնդը (№ 56): Այն ևս պատկանում է արժեքավոր ֆոնդերի թվին: Սույն ուսումնասիրության համար առավել կարևոր են ֆոնդի կառավարչական բաժնի (ցուցակ 1, մաս 1–9) վավերագրերը, որոնք օգնում են

[18] Ծխականների ծննդյան, մկրտության, մահվան և ամուսնությունների գրանցամատյան:

[19] Կիրառելի է նաև երեցփոխան տարբերակը: Համայնքի կողմից ընտրված ներկայացուցիչ, որը մասնակցում էր օրենսդրական մարմնի աշխատանքներին (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1969, էջ 576): Ժողովրդից ընտրված պետական ներկայացուցիչ (**Անդրանիկ Վրդ. Կռանեան**, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, էջ 112):

վերհանել թեմական առաջնորդ-սինոդ, կոնսիստորիա-սինոդ հարաբերությունների բնույթը, և միաժամանակ թեմի վերաբերյալ առկա մի շարք պաշտոնական տվյալների աղբյուր են: Հաճախ այն տեղեկությունները, որոնք չեն պահպանվել կամ թերի են կոնսիստորիայի ֆոնդում, կարելի է գտնել սինոդի ֆոնդում:

Նշված երկու հիմնական ֆոնդերից բացի առանձնանում է նաև Կաթողիկոսական դիվանը, որի վավերագրերը նախկինում պահպանվել են Էջմիածնի մատենադարանում: Հետագայում դրանց մի մասը պահպանության է հանձնվել ՀԱԱ, մյուսը՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան:

Լրացուցիչ և համալրող նշանակություն ունեն ինչպես ՀԱԱ-ում պահպանվող անձնական բնույթ ունեցող, այնպես և Մատենադարանի ու Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվային ֆոնդերը:

Անձնական ծագում ունեցող ֆոնդերից հարկ է առանձնացնել Արիստակես եպս. Սեդրակյանցի ֆոնդը (ՀԱԱ, ֆ. 175), որտեղ պաշտոնական գրագրություններից, նամակներից և հավաքածու նյութերից բացի մեզ է հասել նաև 1845–1901 թթ. հեղինակի կազմած ձեռագիր անտիպ «Հիշատակարանը»՝ բաղկացած մի քանի գրքերից[20]: Այստեղ տեղեկություններ կան նաև Արիստակես եպս. Սեդրակյանցի՝ Վրաստանի և Իմերեթի թեմում առաջնորդության շրջանի մասին, ինչը, անշուշտ, թույլ է տալիս առավել համակողմանիորեն ներկայացնել թեմական կյանքը: Ընդհանուր առմամբ օգտագործվել են 23 ֆոնդերի ավելի քան 200 արխիվային գործեր[21]:

Աղբյուրների մյուս կարևոր խումբը կազմում են հայ եկեղեցական վարչության վերաբերյալ կանոնադրությունները, պետական օրենքների և հրապարակված արխիվային վավերագրերի ժողովածուները[22]: Դրանք են՝ «Պոլոժենիե»-ն[23], Ռուսական կայսրության օրենքների ժողովածուները[24], գործա-

[20] ՀԱԱ, ֆ. 175, ց. 1, գ. 1–12:

[21] Տե՛ս ատենախոսության գրականության և օգտագործված աղբյուրների ցանկը:

[22] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Խրիմեան Հայրիկը եւ Ցարական բռնապետութիւնը (1903-1907), (կազմող՝ Բէհբուդեան Ս.), Գիրք Է, Եր., 2000: Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, Գէորգ Ե. Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց, (կազմող՝ Բէհբուդեան Ս.) Գիրք ԺԳ, Եր., 2005:

[23] Արխիվային օրինակը տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 79, թ. 1–14 և շրջ.:

[24] Свод законов Российской Империи, Уставы духовных дел иностранных исповеданий, т. XI, ч. I, кн. III, с. 905–1059, СПб., 1857, с. 172–196. Свод законов Российской Империи все 16 томов со всеми относящимся к ним продолжениями вь одной книге, т. XI, ч. I, кн. III, с. 1109–1260, СПб, 1900, с. 90–100.

կալների և երեսփոխանների հրահանգության կանոնները[25], Հայ առաքելական եկեղեցու ծխական կանոնադրությունը[26]:

Հետազոտության իրականացման համար առաջնային նշանակություն ունի նաև ժամանակի պարբերական մամուլը: Որպես կանոն, մամուլում տպվում էին ոչ միայն այս կամ այն խնդիրների վերաբերյալ հոգևոր և աշխարհական գործիչների հոդվածները, այլև թեմական առաջնորդների կամ նրանց հետ կապված պաշտոնական հայտարարությունները, նոր ընդունված կանոնադրությունները, երեսփոխանների, դպրոցների և այլոց վերաբերյալ ամփոփիչ հաշվետվությունները: Այս առումով հատկապես առանձնանում են Մայր Աթոռ Սբ Էջմիածնի պաշտոնական տեղեկագիր «Արարատ» ամսագիրը, «Արձագանք», «Մշակ», «Նոր-Դար», «Մուրճ», «Մեղու Հայաստանի», «Հովիւ» թերթերը:

Մեթոդաբանությունը: Հետազոտությունը կատարվել է արխիվային փաստաթղթերի, մամուլի և գրականության հաղորդած տվյալների համադրման ու վերլուծության մեթոդով: Հենվելով օբյեկտիվության և համակարգվածության պահպանման սկզբունքի վրա՝ փորձ է արվել կոնկրետ պատմական իրադարձությունների համատեքստում վեր հանել Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառավարման պատմությունը: Պատմաքննական մեթոդի միջոցով աղբյուրների վերլուծությունը թույլ է տվել ներկայացնել թեմական վարչական կառույցը կազմող օղակների գործունեությունը և կապը միմյանց միջև: Կիրառելով գիտական օբյեկտիվության մեթոդը՝ համակողմանիորեն քննվել են հոգևոր իշխանությունների քայլերը թեմական կառավարման համակարգի խնդիրների լուծման ուղղությամբ:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթներից փորձաքննություն են անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների XXXVI–XXXIX գիտական նստաշրջաններում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Երիտասարդական 3-րդ միջազգային և ԵՊՀ աստվածաբանության, արևելագիտության և պատմության ֆակուլտետների ՈՒԳԸ-ների հանրապետական երիտասարդական գիտաժողովներում: Ատենախոսության նյութերի հիման վրա հեղինակը հրապարակել է յոթ գիտական հոդված:

Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության և օգտագործված աղբյուրների ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ տրված է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, մեթոդական հենքը, ուսումնասիրվածության աստիճանն ու օգտագործված աղբյուրները:

Ատենախոսության առաջին գլխում՝ «***Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանությունը***», ներկայացված է 1836 թ. «Պոլոժենիե»-ի ընդունումից հետո Հայ եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանության ձևավորման գործընթացը, ինչպես նաև թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմնի՝ կոնսիստորիայի կառուցվածքն ու գործունեության շրջանակները:

1828 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միացվելուց հետո Հայ առաքելական եկեղեցու քաղաքական դերի խիստ բարձրացումն իր ազդեցությունը թողեց եկեղեցական-վարչական կյանքի կազմակերպման գործընթացի վրա: Ռուսական իշխանությունները, տարածաշրջանում իրականացրած վարչատարածքային փոփոխություններին զուգահեռ, քայլեր ձեռնարկեցին նաև Հայ եկեղեցու հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Իրականացված փոփոխությունները նախ և առաջ ստացան օրենսդրական ձևակերպում: 1836 թ. մարտի 11-ին ընդունվեց Հայ առաքելական եկեղեցու կառավարումը կարգավորող կանոնադրություն՝ «Պոլոժենիե»:

Հայ առաքելական եկեղեցու կառավարման նոր համակարգը (տե՛ս աղ. I) ձևավորվեց հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր գլխավոր պաշտոնին կցվեց գործակից մարմին՝ օժտված այնպիսի լիազորություններով, որոնք սահմանափակում էին տվյալ պաշտոնի տիրոջ լիազորությունները: Ըստ այդմ, ստեղծվեցին եկեղեցական կառավարման կենտրոնական վարչական մարմիններ: Խոսքն Էջմիածնի սինոդի և թեմերում բացված կոնսիստորիաների (Հոգևոր ատյան) մասին է, որոնք համապատասխանաբար պետք է սահմանափակեին կաթողիկոսի և թեմական առաջնորդների իշխանությունը:

---

[25] «Խրատք տուեք 'ի Կոնսիստորիէն Երևանու գործակալաց իւրոյ 'ի հրահանգութիւն նոցի 'ի գործառնութիւն նոցա» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 451, թ. 12–14 շրջ.), **Գէորգ արքեպս. Սուրէնեանց,** Կանոններ Վրաստանի եւ Իմերէթի թեմի հայ եկեղեցիների գործակալների եւ երեցփոխանների հրահանգութեան համար, Տփխիս, 1895:

[26] 1900 և 1907 թվականների օրինակները տե՛ս Արարատ, 1902, Գ-Դ, էջ 209–232: ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 36, թ. 1–15:

Աղյուսակ I

1836–1917 թթ. Հայ առաքելական եկեղեցու կառավարման կառուցվածքը



Հայ առաքելական եկեղեցու թեմական կառավարման համակարգը վերակառուցվեց նույն սկզբունքներով, ինչ որ ռուսականը: Համակարգի բնույթից բխող խնդիրներն այստեղ ևս գլուխ բարձրացրեցին, սակայն հակասություններն առավելապես դրսևորվեցին կաթողիկոս, Էջմիածնի սինոդ և թեմական առաջնորդ հարաբերություններում:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ **«Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի փոխանորդությունները և գործակալությունները»,** տրվել է թեմի եկեղեցական-վարչական բաժանումն ու կառավարման առանձնահատկությունները: Ներկայացվել է թեմական կառավարման միջին օղակների՝ փոխանորդությունների և գործակալությունների վարչական կազմությունը, փոխանորդի և գործակալի պաշտոնների դերը թեմական կառավարման համակարգում:

Ռուսական կայսրության սահմաններում գտնվող Հայ առաքելական եկեղեցու թեմերը բաժանված էին առանձին եկեղեցական-վարչական շրջանների՝ փոխանորդությունների (Հոգևոր կառավարություններ), որոնք էլ իրենց հերթին տրոհված էին առավել փոքր միավորների՝ գործակալությունների (գործակատարություն):

Հայոց հոգևոր թեմերի սահմանաբաժանումն արված էր համապատասխան կայսրության տվյալ պահի քաղաքական բաժանման: Վրաստանի և Իմերեթի թեմն իր մեծությամբ երկրորդն էր Երևանի թեմից հետո: Վարչական առումով այն բաժանված էր երեք փոխանորդության (Գորի, Ելիզավետպոլ, Ախալցխա) և մինչև 16 առանձին գործակալությունների:

Փոխանորդությունները, ինչպես կոնսիստորիան, կոլեգիալ մարմիններ էին: Նրանց հիմնական պարտականությունն իրենց ենթակա տարածքների բարեկարգությանը հետևելն էր, դրանց վերաբերյալ կոնսիստորիային անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը, մասնավոր անձանց խնդրագրերն ընդունելն ու դրանք կոնսիստորիային ներկայացնելը[27]:

Փոխանորդություններն ու գործակալությունները, լինելով թեմական վարչական կառույցի միջին օղակ, մի կողմից պետք է ապահովեին կապը ծխերի ու թեմական բարձրագույն հոգևոր իշխանության միջև, մյուս կողմից իրականացնեին եկեղեցու վրա դրված պետական իշխանության մարմինների պահանջները:

Վրաստանի և Իմերեթի թեմը, ունենալով բավական ընդարձակ սահմաններ, ստիպված էր մի շարք բարդություններ հաղթահարել թեմի կենտրոնացված և համակարգված կառավարումն իրականացնելու համար: Սակայն, ընդհանուր առմամբ, թույլ էր կապը թեմական կենտրոնական իշխանության և փոխանորդությունների ու գործակալությունների միջև:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի ծխական համայնքների կառավարումը»,** վերաբերում է թեմի ծխական համայնքների կառավարման խնդիրների լուսաբանմանը: Առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել Հայ եկեղեցու «Ծխական կանոնադրության» ընդունմանը: Ապա ներկայացվել է Վրաստանի և Իմերեթի թեմի ծխերի կառավարման ձևը մինչ կանոնադրության ընդունումն ու դրանից հետո ընկած ժամանակ: Երկրորդ ենթագլխում փորձ է արվել վերհանել ժողովուրդ-հոգևոր իշխանություն հարաբերությունները Վրաստանի և Իմերեթի թեմում:

Ծխական համայնքները թեմական վարչական կառույցի առաջնային միավորներն էին: Մինչև XX դ. սկիզբը Հայ առաքելական եկեղեցու ծխական համայնքները կառավարվել են ծխական ժողովրդի եկեղեցական կենցաղավարության և գործունեության համար ընդունված սովորութային նորմերով: Համակարգված և միասնական կանոնադրություն չի եղել:

[27] Տե՛ս «Պոլոժենիե», Գլուխ II, հոդ. 78–82:

Ծխական համայնքների կառավարման համար համակարգված և միասնական կանոնադրություն ստեղծելու փորձ կատարվեց միայն Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության (1893-1907) և XX դ. սկզբին լայն թափ ստացած Հայ առաքելական եկեղեցու բարենորոգչական շարժման շրջանում:

Կանոնադրության ընդունմամբ Հայ եկեղեցու թեմերի ծխերի կառավարման հարցում միօրինակություն և համակարգվածություն մտցնելու փորձ կատարվեց: Վրաստանի և Իմերեթի թեմում ծխական համայնքների կառավարման հիմնական խնդիրները վերաբերում էին երեսփոխանների գործունեության կարգավորմանն ու վերահսկմանը, այդ գործընթացին ծխականների ակտիվության խթանմանը, ինչպես նաև հոգևոր և աշխարհական պաշտոնյաների կանոնավոր ընտրությունների անցկացմանը:

Աշխատանքի չորրորդ գլխում՝ **«Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցի խնդիրներն ու բարեկարգումը»,** XIX դարի 80–90-ական թվականների – XX դարի առաջին տասնամյակի Հայ առաքելական եկեղեցու շուրջ տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում ներկայացվել են թեմական վարչական կառույցի խնդիրները և դրանց վերացման ուղղությամբ կենտրոնական իշխանության ձեռնարկած քայլերը:

Նշված ժամանակահատվածում հայ հոգևոր իշխանությունները ստիպված էին գործել առավել բարդ և լարված իրավիճակում՝ պայմանավորված ինչպես ռուսական իշխանությունների իրականացրած եկեղեցական քաղաքականությամբ, ազգային ազատագրական շարժման վերելքով, այնպես և հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով:

Այս պայմաններում թեմերում կուտակված խնդիրներն առավել սրությամբ արտահայտվեցին: Խնդիրներ կային Վրաստանի և Իմերեթի թեմի կառավարման համակարգի գրեթե բոլոր ոլորտներում, որոնք կարելի է դասակարգել ըստ հետևյալ հիմնական խմբերի՝

- Վարչական
- Ֆինանսատնտեսական
- Կրթամշակութային

XIX դ. 80–90-ական թվականներին թեմական կենտրոնական իշխանությունները թեմի կառավարման համակարգի բարեկարգումը փորձեցին իրականացնել ոչ միայն համապատասխան ներքին հրահանգներ կազմելով, այլև դրանք գործնականում կիրառելով: Առավել քան երբևէ, ուշադրություն դարձվեց նաև քահանայական հարցի լուծմանը: Թեմում առաջին անգամ քահանայի համար վարձատրություն սահմանվեց: Կարևորվեց նաև ինչպես քահանաների

միջև ներքին կապի ամրապնդումը, այնպես և ծխականներ-հոգևոր իշխանություն թուլացած կապի վերականգնումը:

XX դ. առաջին տասնամյակում ռուսական իշխանությունները շարունակեցին իրագործել Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույնության սահմանափակմանն ուղղված քայլեր: Վրաստանի և Իմերեթի թեմի իշխանությունները ստիպված էին զբաղվել ոչ միայն թեմական կառավարման խնդիրներով, այլև հայ ժողովրդին ու եկեղեցու կայունությանը սպառնացող վտանգների դիմագրավմամբ: Թեմական իշխանությունները նախ ակտիվորեն ներգրավվեցին Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման դեմ սկիզբ առած պայքարին, ապա ռուսական իշխանությունների սանձազերծած հայ-թաթարական ազգամիջյան բախումների հանդարտեցման աշխատանքներին: Այս իրադարձություններն էլ ավելի խորացրեցին թեմերում առկա խնդիրները: Միևնույն ժամանակ մեծ թափ ստացավ Հայ առաքելական եկեղեցու բարենորոգչական շարժումը, որը, ճիշտ է, չկարողացավ կոնկրետ արդյունքի հասնել, սակայն մի շարք հարցերի բարձրաձայնումն իսկ լրացուցիչ ազդակ և խթան դարձավ դրանց լուծման ուղղությամբ հետագա քայլերի մշակման համար:

Եզրակացություններ: Սինոդային կառավարման շրջանում Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն կենտրոնական իշխանությունը ներկայացնում էին Էջմիածնի սինոդը և Ամենայն հայոց կաթողիկոսը: Սինոդի համանմանությամբ ռուսահայոց թեմերում թեմական առաջնորդներին կից բացվեցին թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմիններ՝ կոնսիստորիաներ:

Վրաստանի և Իմերեթի թեմի կառավարման համակարգի հիմնական խնդիրներն ընդգրկում էին վարչական, ֆինանսատնտեսական և կրթամշակութային ոլորտները: Ընդհանուր առմամբ թեմի հոգևոր իշխանությունները նոր համակարգի թելադրած պայմաններում հնարավորինս փորձեցին կազմակերպել թեմական վարչական կառույցը՝ միաժամանակ ապահովելով եկեղեցու ունեցած ազգահավաք գործառույթի կատարումը:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները

1. Փաստաթղթեր Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի XIX դ. վերջի - XX դ. սկզբի եկեղեցական-վարչական կյանքում առկա խնդիրների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, Եր., 2016 (№ 124), էջ 26-46:
2. Հայ եկեղեցու Վրաստանի եւ Իմերեթի թեմի կենտրոնական իշխանության ձեւավորման գործընթացը ԺԹ. դարի 30-90-ական թվականներին, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2017, Թ, էջ 59-70:
3. Հայ առաքելական եկեղեցու կառավարման համակարգում իրականացված բարեփոխումները և Վրաստանի ու Իմերեթի թեմի ծխական համայնքները (XIX դ. վերջ - XX դ. առաջին տասնամյակ), «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածու, Եր., 2017 (№ 125), էջ 272-279:
4. Об оптимизации системы управления Грузино-Имеретинской епархии (1894-1904), «Բանբեր Հայագիտության», Եր., 2018, № 2 (17), էջ 100-109:
5. Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի գործակալությունների կառավարումը XIX դ. 30-ական թվականներին - XX դ. սկզբին, «Մատենադարան. Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2017 թ., Նոյեմբերի 28-30)», Եր., 2018, էջ 222-230:
6. Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան (XIX դ. 30-ական թթ. - XX դ. առաջին տասնամյակ), «Լրաբեր հասարակական գիտությունների»,Եր., 2019 (№ 3), էջ 53-62:
7. Քահանայական սպասաւորութեան խնդիրը Հայ Առաքելական Սբ Եկեղեցու Վրաստանի եւ Իմերեթի թեմում (ԺԹ. դ. երկրորդ կէս- Ի. դ. առաջին տասնամեակ), «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2020, Ե, էջ 69-81:

ГРИГОРЯН ВАРДИТЕР КАМОЕВНА

СИСТЕМА АДМИНИСТРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ ГРУЗИНО-ИМЕРЕТИНСКОЙ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В 30-Е Г. XIX В. – ПЕРВОМ ДЕСЯТИЛЕТИЕ XX В.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита состоится 5 октября 2021 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основная цель данного исследования изучение становления системы административного управления Грузино-Имеретинской епархии Армянской апостольской церкви в условиях внедрения и функционирования синодальной системы управления.

В диссертации рассмотрен ряд вопросов касающиеся структуры, функций и особенностей работы всех органов епархиального управления, церковно-административного деления Грузино-Имеретинской епархии, проблеме управления приходами, а также представлены шаги реформирования епархиального управления, предпринятые епархиальными властями в рамках внутренних и внешнеполитических событий, разворачивающихся вокруг Армянской апостольской церкви.

Основными источниками исследования составляют архивные документы фондов Грузино-Имеретинской епархии, Эчмиадзинского синода, Дивана католикоса и других церковных фондов хранящихся в Национальном архиве Армении и Научно-исследовательском институте древних рукописей имени Месропа Маштоца.

В 1828 г. после объединения Восточной Армении с Российской империей резкое усиление политической роли Армянской апостольской церкви сказалось и на организации церковно-административной жизни. Российские власти параллельно с административно-территориальными изменениями, в регионе предприняли шаги по установлению отношений с Армянской церковью. Внедренные изменения, прежде всего, получили законодательную форму. 11

марта 1836 г. был принят устав, регулирующий управление Армянской апостольской церковью. Путем введения синодальной системы управления российские власти стремились совместить внутренние и внешнеполитические интересы.

Епархии Армянской апостольской церкви, находящиеся в пределах Российской империи были разделены на отдельные церковно-административные округа (Духовные правления), которые, в свою очередь, состоялись из отдельных благочинных округов. Первичными единицами епархиальной административной структуры являлись приходы.

В состав Грузино-Имеретинской епархии входили армянские общины, находящиеся в Тифлисской и Кутаисской губерниях, Сухумской и Закатальской округах, Казахской и Гандзакской провинциях Елизаветпольской губернии, а с 1878 г. в состав епархии была включена также Батумская область. Административно Грузино-Имеретинская епархия была разделена на три Духовные правления (Гори, Елизаветполь, Ахалцихе) и до 16 отдельных благочинных округов.

В указанный период система епархиального управления Армянской апостольской церкви была перестроена по тем же принципам, что и российская. Следует отметить, что проблемы были практически во всех сферах системы управления Грузино-Имеретинской епархии, которые можно разделить на следующие основные группы:

- Административный
- Финансово-экономический
- Образовательный

Но в целом, церковные власти Грузино-Имеретинской епархии, в условиях новой системы, старались максимально упорядочить церковно-административное устройство епархии. Имея обширные границы, епархиальным властям Грузино-Имеретинской епархии приходилось преодолевать ряд трудностей для осуществления централизованного и скоординированного управления епархией.

GRIGORYAN VARDITER

ADMINISTRATIVE MANAGEMENT SYSTEM OF THE GEORGIAN-IMERETI DIOCESE OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE 30S OF THE XIXth CENTURY - THE FIRST DECADE OF THE XXth CENTURY

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the Dissertation will be held on October 5, 2021, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The main purpose of the Dissertation is to study the formation of the administrative management system of the Georgian-Imereti Diocese of the Armenian Apostolic Church in the context of the implementation and functioning of the Synodal management system.

The Dissertation examines a number of issues related to the structure, functions and the peculiarities of the work of all bodies of the diocesan administration, the church-administrative division of the Georgian-Imereti Diocese, the problem of parish administration. As well as presenting the steps of reforming the diocesan administration taken by the diocesan authorities within the framework of internal and external political events unfolding around the Armenian Apostolic Church.

The main sources of the research are archival documents from the funds of the Georgian-Imereti Diocese, the Echmiadzin Synod, the Divan Catholicos and other church funds stored in the National Archives of Armenia and the Scientific Research Institute of Ancient Manuscripts named after Mesrop Mashtots.

In 1828 after the unification of Eastern Armenia with the Russian Empire, a sharp increase in the political role of the Armenian Apostolic Church affected the organization of church-administrative life. The Russian authorities, in parallel with the administrative-territorial changes in the region, took steps to establish relations with the Armenian Church. The introduced changes first of all received a legislative form. On March 11, 1836, a charter was adopted regulating the management of the

Armenian Apostolic Church. By introducing a Synodal management system, the Russian authorities sought to reconcile domestic and foreign policy interests.

The Dioceses of the Armenian Apostolic Church located within the Russian Empire were divided into separate church-administrative districts (Spiritual government), which, in turn, were divided into smaller units. The primary units of the diocesan administrative structure were parishes.

The Georgian-Imereti Diocese included the Armenian communities located in the Tiflis and Kutaisi Governorats, the Sukhum and Zakatala districts, the Kazakh and Gandza provinces of the Elizavetpol Governorate, and since 1878 the Batum Oblast was included in the Diocese. Administratively, the Georgian-Imereti Diocese was divided into three Spiritual governments (Gori, Elizavetpol, Akhaltsikhe) and up to 16 separate small units.

During this period, the diocesan management system of the Armenian Apostolic Church was rebuilt according to the same principles as the Russian one. It should be noted that there were problems in almost all areas of the Georgian-Imereti Diocese management system, which can be divided into the following main groups:

- Administrative
- Financial and economic
- Educational

In general, in the conditions dictated by the new system, the diocesan authorities of the Georgian-Imereti Diocese tried to organize the diocesan administrative structure as much as possible. Having vast borders, the diocesan authorities of the Georgian-Imereti Diocese had to overcome a number of difficulties in order to implement a centralized and coordinated administration of the Diocese.

ԼՈՒՍԱԲԱՑ

Պուշկինի 46
Հեռ. + 374 (10) 53 96 47, + 374 (55) 78 47 87
E-mail: lusabats@netsys.am
lusabatc@mail.ru

Տպագրված է «Լուսաբաց հրատարակչատան» տպարանում